

ՏԱՍՆՄԵԿԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄԱՅ

Տարեկան գինը 10 ռուբլ, կես տարվանը 6 ռուբլ:
Առանձին համարները 5 կոպեկով:
Թիֆլիսում գրվում են միմյանից խմբագրատան մէջ:
Օտարաբաղադրակեր գինում են ուղղակի
Тифлисе. Редакция «Мая»

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի և տոն օրերէն):
Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով:
Յայտարարութիւնները համար վճարում են
իրաքանչիւր բառին 2 կոպեկ:

ԲՈՎԱՆԱԿՈՒԹԻՒՆ

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ: Նամակ Բագուից:
—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ: Ստամբուլի լրագրի
յօդուածը: Նամակ Թիֆլիսից: Արտաքին լուրեր:
—ՀՆՈԱԳԻՆՆԵՐ: —ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ: —
ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ: Ուսուցչական ժողովի առիթով:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ԲԱԳՈՒԻՑ

Օգոստոսի 18-ին

Ամսոյս 16-ին այստեղ կատարված մի ճարակի
գողութիւն արժանի է ուշադրութեան. մի ժամա-
ցուցավաճառի խանութը, որ գտնվում էր քաղա-
քի ամենաբազմամարդ և նշանաւոր տեղում—հրա-
պարակի մօտ, առաւօտեան ժամը 5-ից դեռ մի
փոքր էլ անց գողերից կողոպտված էր: Գողերը
յարբար ժամանակ գտնելով, երբ խանութատէրը,
որ միշտ գիշերները այնտեղ է եղել քնելիս, առա-
ւօտեան կողպելով խանութը գնում է կարծես ծովը
լողանալու, բայց են անում կողպէքը և վեր առ-
նելով ոսկեղէն և բրդեղանաւոր իրերէնների մի
նշանաւոր քանակութիւն 13,000 ռուբլ արժողու-
թեամբ, օրը ցերեկով անցաւ անտես: Զը գի-
տեմ ինչու համար են խանութատէրները ամբար
100-ներով գիշերապահների փող տալիս, երբ օրը
ցերեկով, այն էլ մի այնպիսի տեղում այդպիսի
աշխարհայ գողութիւն է լինում... Հասարակու-
թեան ձայնը կասկածում է գիշերապահներին:

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՈՒՍՈՒՑՉԱԿԱՆ ԺՈՂՈՎԱՆՈՒԹԻՒՆ

I
Ինչ կասէիք, ընթերցող, եթէ մի օր և է մար-
դու զանազանութիւնը ուրիշ մարդկանցից որոշե-
լու համար, ես ձեզ այսպէս կը նկարագրէի այդ
մարդու արտաքին յատկանիշները. «այդ այն
մարդն է, որ ունի մի գլուխ, մի քիթ, երկու
աչք, երկու ձեռք և երկու ոտը»:
Անշուշտ դուք ինչ էլ կ'ապաստանաիք որ զը-
րանով չէ կարելի որոշել մի մարդուն միւս մարդ-
կանցից, որովհետեւ բոլոր մարդիկն էլ այսպէս են,
ամենքն էլ ունեն մի գլուխ, երկու ձեռք ու եր-
կու ոտը, և այլն:

Բայց ուսուցչական ժողովի կարգադրիչ յանձ-
նաժողովը իսկ և իսկ այդ ձեռով է որոշել ծխա-
կան արդպիւն դպրոցների. նա պատահել իր ծը-
րարքի առաջարկներ մէջ:

«Երևական դպրոցների նպատակն է մտցնել
բարոյական զարգացում և մտաւոր կրթութիւն»:
Իսկ ահա ամբողջ ժողովը չորս ժամ շարունակ
վիճում է այդ խնդր քննարանի վրա և ոչինչ հե-
տեանքի չէ կարող հասնել:

Եթէ ծխական դպրոցների նպատակը այս է,
ուրեմն մի օր և է ուրիշ դպրոցի նպատակը ինչ
է, միթէ ուրիշ տեսակ դպրոցների նպատակն է
մտցնել անբարոյական և անարդար և մտաւոր
անկրթ ու թուլ ծխական...

Մտցնել բարոյական զարգացում և մտաւոր
կրթութիւն ամեն տեսակ դպրոցի նպատակն է,
թէ ծխական, թէ միջնակարգ, թէ գիմնազիայի,
թէ կիրակնօրեայ, թէ արհեստագիտական դպրո-
ցի, թէ համալսարանի: Այդ բանական չէ. նոյն
նպատակը ու թէ միայն դպրոցն ունի, այլ, եթէ
կուզէք, և գիրքը, և լրագիրը, և եկեղեցին, և հը-
րապարակական դաստիարակութիւնը, և թատրոնը
և այլն:

Միթէ մտցնել բարոյական զարգացում և մտա-
ւոր կրթութիւն միայն ծխական դպրոցի նպա-
տակն է, ոչ զա ամեն դպրոցի նպատակն է, և
զրանով չէ կարելի որոշել մի դպրոց մի այլ դըպ-

կանական ծովը իր այստեղի լողարանում այս
տարվայ առաջին զոհն արաւ մի մալականին:
Նրան հանել էին զեռ շուշուր բերանում. սակայն
անկարող լինելով նրան հարկաւոր եղած հողա-
ցողութիւնը տալ, խեղճը միւս օրը վախճանվել էր:
Մի խնդրի համար, որի առթիւ են արդէն «Մը-
շակին» անցնալ նամակովս գրել էի, լոյս չը
տեսնելը ինձ կարծել է տալիս որ խմբագրու-
թեան ձեռքը այդ նամակը չէ հասել: Վերջին
ժամանակներում թէ քաղաքում և թէ դրծա-
րաններում հրդեհները յաճախակի կրկնվելով իմ
նպատակս էր ընթերցողին մի զաղափար տալ
թէ արդեօք նախկին արդիւնաբերութեամբ պա-
րագողները քաղաքի մէջ ինչպէս էին վարվում պա-
տահած հրդեհի հետ, որը այդպիսի նիւթերի գի-
րավաւորութիւնից անխուսափելի է: Քաղաքի մէջ
պատահել է հրդեհ. այրվում են երկու խանութ-
ներ, վտանգը սպառնում է և շրջակայ խանութ-
ներին, որոնց տէրերը իրենց օրական ապրուստի
պարէնը հայթայթելու նպատից են սպասում: Ի-
մաց է արվում դուժալի պրիտուպին, որը վեր-
առնելով իր հետ քաղաքային այգին ջրելու մի
փոքրիկ և առանց տակաւի նստօս (ջրհան) շտա-
պում է կրակի մօտ: Բայց ջուր չը կայ. նա
ստիպված է այս և այն իշապանի, արաքաշու
դուռը թակել կէս գիշերին ջուր բերելու համար:
Մի կերպով յաջողում են մի տակաւապի ջուր
հասցնել. ջուրը վերջացաւ, կրակը որ դարձրելու
վրա էր, դարձնաւ սկսում է բորբոքվել և մինչև
նոր ջուր հասցնելու ակելի տարածվելով, լափում
է ամբողջապէս խեղճերի արեան և քրտինքի վա-
տակը. ամբողջ այդ բոլորը սարսափով դիտում

րոցից, դա յատկանիշ չէ կարող լինել մի տեսակ
դպրոցին:

Եթէ այդ է ծխական դպրոցի նպատակը, ու-
րեմն միջնակարգ դպրոցի նպատակը ինչ է. նոյն-
պէս մտցնել բարոյական զարգացում և մտաւոր
կրթութիւն: Իսկ տեխնիկական դպրոցի նպատա-
կը ինչ է, բացի մասնագիտական ուսումից,—
նոյնպէս մտցնել բարոյական զարգացում և մտա-
ւոր կրթութիւն: Իսկ գիմնազիայի նպատակը ինչ
է,—նոյնպէս մտցնել բարոյական զարգացում և
մտաւոր կրթութիւն: Իսկ համալսարանի նպատա-
կը ինչ է,—նոյնպէս մտցնել բարոյական զարգա-
ցում և մտաւոր կրթութիւն: Իսկ ձեռնարանի նը-
պատակը ինչ է,—նոյնպէս մտցնել բարոյական
զարգացում և մտաւոր կրթութիւն:

Ուրեմն ինչով են զանազանվում միմեանցից
այլ և այլ դպրոցներ: Կարգադրիչ յանձնաժո-
ղովի լոգիկայով ոչինչ ուի:

Ուրեմն այդ քննարանը ինչպէս կարող է մի-
միայն ծխական դպրոցներին յատկացնել լինել:
Իսկ ահա սկսվում են երկար ու ապարդիւն վի-
ճաքանութիւններ, որոնք ոչնչով չեն վերջանում:
Երեւելի գերմանական մանկավարժ, Բահմերան,
տիրացուական-միջառաքիական ձայնով սկսում է
ողնորված կերպով խօսել բարոյականութեան նը-
շանակութեան վրա և պաշտպանել յանձնաժո-
ղովի բնաբանը:

Հին մանկավարժ յատիսեան սկսում է ապացու-
ցանել որ յանձնաժողովի բնաբանը ոչինչ չէ նշանա-
կում, այլ պէտք է այսպէս ասել. «ծխական դպրոցի
նպատակն է այնպէս պատրաստել մանուկին, որ նա,
աւելի կատարելա, դառնայ շարունակող իր ծնողնե-
րի պարագայութեանը, վերադառնալ իր շրջանին, չը
կտրվի իր շրջանից, երկարադուր չը գնայ քաղաք,
չը դառնայ, օրինակ, վաճառական և այլն: Բայց
ինչ ուղղութիւն տալ դպրոցին, ինչ անել որ
դպրոցը հասնի իր այդ նպատակին,—այդ չէ ա-
սում պարզել: Արդեօք պէտք է բարոյապէս այն
աստիճան ազդել մանուկի վրա որ նա այդ ճը-
մարտութիւնը հասկանայ, կամ պէտք է նրան
ծխական դպրոցում արհեստներն ու երկարադու-
րութիւնը ուղղորդել, որպէս զի նա բարոյապէս
կազմված մնայ իր շրջանի հետ»:

Յակոբ Տեր-Յովհաննիսեան, նախկին թեմական

է. ամենի բերանից արտոնել է լսվում, թէ ինչու
քաղաքը դռն է երկու կանոնաւոր տակաւ ան-
գամ չունի, այդպիսի դիպուածներում օգնութեան
հասնելու, մինչ նա 100,000 ռ. չէ խնայում ծովի
ափի ճանապարհները գեղեցկացնելու: Հրդեհը հան-
գաւ, անցան և մուսաղվեցան բոլոր այդ արտոնե-
ներն և միւս առաւօտ դու խեղճ խանութատէր-
ներին կը տեսնես արտաւորը աչքերում այրված
փայտի կտորաւորները դուրս տալիս:

Պատահել է հրդեհ քաղաքից 4 վերստ հեռաւոր-
ութեամբ պ. Ե. Քալանթարեանի գործարանում:
Բայց հանցեցնելու համար ոչինչ չը կայ. այնտե-
ղից դիտւում են քաղաքը դուժալի օգնութեամբ,
որը իր այդ ողորմելի նստօսը շտապում է այն-
տեղ հասցնել: Բայց միթէ այդքան ժամանա-
կամիջում նշանից առաջացած մի այդպիսի հըր-
դեհ չէր կարող իր աւելի բուցելու ակելի տա-
րածելով և շրջակայները ոչնչացնել. ինչը կարող
էր դիմադրել նրան. դուժալի նստօսը... այդտեղ
կարելի է ինչէլ հետեւալ առածը. «մինչև Եռ-
շաքը կը գարալվի, ժամը կարճակլի»: Մի շա-
բաթ չը կայ, որ մի թուրքի դրծարանում դար-
ձնալ կրակ կար. շատ դժուարութեամբ հանգ-
րել են նրան: Այս բոլորից յետոյ մի հարց, մի
քաղաքի մէջ, ուր դեթէ ամենայն մի փողոցի
վրա այդպիսի դիւրաւաւ նիւթերի փոքրիկ կամ
մեծ պահեստներ կան, ուր իւրաքանչիւր մի լո-
պտում հրդեհ վտանգ է սպառնում,—անհրաժեշտ
չէր արդեօք հրաշէշների մի փոքրիկ բայց կանո-
նաւոր խումբ ունենալ: Այդ հարցի պատասխանը
մենք թողնում ենք դուժալի անդամների և գոր-
ծարանատէրերի վճռին, բաւականաւորով այդ

տեսուչը, ասում է. ոչ, պարոններ, ոչինչ չէ
հարկաւոր անել, մանուկին ստիպելու համար որ
նա անպատճառ չը դուրս գայ իր շրջանից, թող
ընդհանաւակին, դուրս գայ, ինչ ուղղութիւն է դառ-
նայ, թող երկարադուր ուղիւն բռնի, փաստաբան
դառնայ, եթէ նրա սիրտն ուզում է, միայն մարդ
պատրաստեք ծխական դպրոցի աշակերտից: Նո-
ւաւոր պատրաստել մանուկից կարելի է միայն
ընդհանուր բարոյականութեան, քրիստոնեւորութեան,
աւետարանական և ճշմարտութեան միջոցով:

Շատ գեղեցիկ միտք,—բայց դարձնալ չէ ցոյց
տալիս, որ այդ է միմիայն ծխական դպրոցի նը-
պատակը, որովհետ չէ կարելի որոշել ծխական
դպրոցը այլ տեսակ, այլ ձեւի, այլ կարգի դպրոց-
ներից: Դա չէ կազմում միմիայն ծխական դպրո-
ցի յատկանիշը: Եւ ինչ միջոցներ ունէք, հարց-
նող լինի, ծխական դպրոցի միջոցով մանուկից
մարդ պատրաստել, ծխական դպրոցի, որտեղ
մեծ մասամբ ուսուցանում էք ամենաանհմանա-
փակ կերպով չորս առարկաներ. կրօն, թուրա-
նութիւն, հայոց լեզու և ուսուցիչ լեզու:

Կարծում ենք որ համալսարանը ակելի խոր,
ակելի ընդարձակ բարոյական սկզբունքներ կա-
րող է առաջարկել իր ամենիւրեք. բայց երբ որ
ինքն չըլանը անբարոյական է, որից դուրս է եկել
ուսանողը, երբ այդ անբարոյականութիւնը չափից
դուրս խոր արմատներ է գցել նրա ողորմե-
լինչ կարող է անել նոյն իսկ համալսարանը: Հա-
մալսարանն էլ ունի նպատակ ուսանողից մարդ
պատրաստել, բայց այդ մարդը շատ անգամ դուրս
է գալիս համալսարանից՝ հարստահարող, վաշխա-
ռու, խաբարայ, կաշառակեր: Համալսարանի նը-
պատակն էլ է մարդ պատրաստել, բայց արդեօք
կարողանում է նա միշտ հասնել իր նպատակին:

Բայց, ո՞վ գիտէ, կը գտնվին իսկը մանկավարժ-
ները, որոնք կասեն թէ տարրական դպրոցի համար
աւելի հեշտ է ազդել բարոյապէս մանուկի
վրա, քան թէ համալսարանին ազդել արդէն հա-
ռակ առած երիտասարդի վրա: Ուրեմն էք
ուրեմն, կը հարցնենք մենք, որ տարրական դըպ-
րոցը ընտանիքի տեղը բռնի: Այն ժամանակ,
նախ քան յայտարարելու ձեւ երեւելի բնաբանը,
պատրաստեցէք բարոյական, կատարական
ուսուցիչներ, որոնք ծնողների տեղը բռնեն:

Երկու խոսքով. «վտանգը գալիս առաջ, պէտք է
նորա առաջն առնել»:

Ամսոյս 16-ին Արեւմտիկ նաւամատոյցի վրա
«Վճիկով» շոգենաւը բարձրելա, մի մեծ տակաւ
ընկնելով, իր տակն է թողնում կրեք մշակներին.
Երկուսը քիչ մնաւելով, կարողանում են ազատ-
վել, իսկ մի պարսկահագաթակ թուրք մնում է:
Արեւ Ապրեւոտեանց

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

«ՍՏԱՄԲՈՒՆ» ԼՐԱԳԻՐ ԹՅՈՒՈՒՄԸ

Կ. Պօլսից մեզ հաղորդում են «Ստամ-
բուլ» լրագրի 14/24 օգոստոսի թուականով
հետեւեալ առաջնորդող յօդուածը:

«Օսմանեան կայսրութեան և Պարսկաս-
տանի մէջ եղած բարեկամական յարաբե-
րութիւններն Շէյխ Ուպէտուլլահի փախուս-
տին պատճառաւ այս միջոցիս դժուարին
մի կերպարանք առած են: Բամազան ամսոյ
մէջ քիւրդ ցեղապետ, չը գիտեմք տակաւին
ինչ միջոցով, յաջողեցաւ իւր շուրջն եղած
հսկողութիւնն ի դերե հանել և այս մի-
ջոցիս քիւրդիստանի մէջ կը գտնուի նա
ուր ամեն ցեղերն հաճութեամբ ընդունել
են նորա գալուստը:

Դիւրին է հասկանալ այն յուզմունքն որ
Շէյխ Ուպէտուլլահի փախուստն այս տեղի

նախ քան ծխական դպրոցներ բարեկարգելու,
հիմնեցէք մի ուսուցչական սեմինարիա, մի
վարժապետական ուսոց... Գուցէ այն ժամանակ
կիրաւորվի ձեր բնաբանը:

«Երևական դպրոցի նպատակն է մտցնել բարոյա-
կան զարգացում ու մտաւոր կրթութիւն» առե-
ցիք ու պրծաք: Մտցիք այդ բնաբանը ձեր
ծրագրի մէջ ու միթիւրաբեցաք:

Վերջապէս ինչ բան է ծխական դպրոցը:

II

Մենք, հայերս, ունենք միմիայն կրօնական
դպրոցներ, կամ ակելի լաւ է ասել միմիայն դա-
ւանական (confessionnel, конфессиональный) դըպ-
րոցներ: Մեր բոլոր դպրոցները ենթարկվում են
մեր հոգևոր իշխանութեանը:

Հոգևոր իշխանութեան վարչական տեսակե-
տից մեր բոլոր դըպրոցները բաժանվում են երկու
տեսակ դպրոցների վրա. համաժամ հոգևոր վարչա-
թեան կամ եկեղեցու վարչական և երկու միա-
ւոր են իր, այն է ծուխական և թխական, մեր դպրոց-
ներն էլ լինում են կամ ծխական կամ թխական:

Ծխական դպրոց իրաւունք ունի ունենալ
իւրաքանչիւր ծուխ, իւրաքանչիւր եկեղեցի,
իսկ թխական դպրոցը լինում է միմիայն թի-
մի կենտրոնում:

Բայց թողնելով մեր դպրոցների եկեղեցական-
վարչական բաժանմունքը և նայելով մեր դպրոց-
ների վրա, իրանց պրոգրամայի տեսակետից, մեր
ծխական դպրոցներն էլ միատեսակ չեն լինում
թիֆլիսի Մոզնու եկեղեցու դաւթում գտնվում է
մի օրիորդական ծխական դպրոց, որ ունի հինգ
դաստաւուն և անուանվում է արդէն միջնակարգ,
և ուրիշ կողմից, դիտեք Հաւաթարի Ս. Լուսա-
ւորչի եկեղեցու դաւթում, գտնվում է նոյնպէս մի
ծխական արական դպրոց, որ բաղկացած է մի
դաստաւունից և ամբողջութեամբ ամփոփվում է
մի սենեակում: Ուրեմն ինչպէս առաջինի, այն-
պէս էլ երկրորդի նպատակն է մտցնել բարոյա-
կան զարգացում և մտաւոր կրթութիւն: Ինչ
զանազանութիւն կայ, ուրեմն, այդ երկու դըպ-
րոցների մէջ, որոնցից միւրը միջնակարգ է, իսկ
միւսը տարրական...

Ուրեմն մեր ծխական դպրոցները լինում են

Գ. Ա.

Հարկին հայերն և թիւրքերն զուգարկելով ի բաց մեղք ելով քոչուրդներն: Հետեւեալս զարձեալ թափառական քուրդ տարրը որք լինենք կը բնակին և որք անկարգութիւնք գործելու համար միայն զաշտերն կիջնեն, չեն կարող վիճակագրութեանց մէջ հաշուել, երբ այդ վիճակագրութեամբ ամեն աւան կազմող ցեղերու մեծամասնութիւնը ճշդիւ նշանակել ուզուի: Կ

Բոլոր ասոնք թուղթի վերայ զեղեցիկ բաներ են, բայց և արօպական աշխարհաւարք կը մոռնան ըսել թէ ի՞նչ կերպով կարելի է թիւրքը հայէն բաժանել: Այդ երկու ազգերն քով քովի չեն բնակիր, այլ ընդհակառակն այնպէս միմեանց խառնուած են, որ բերայի դեպքանտանց առաջարկած միջոցն խիստ դժուարին է ի գործ դնել: Բացի այդ, միթէ կարելի՞ է կարծեն քուրդները հանգարտեցնել զանոնք արտաքին օրինաց հոգակցով: Եթէ այդ զաւանդներն իբր վայել Եգիպտոսի բաշայի նըման մարդիկ յուղարկեն, եթէ խառն մի օտարականութիւն կազմէին մահապաշտներն և քրիստոնեայներէ բաղկացեալ և եթէ մի քանի անգամ անհրաժեշտ եղած պատիժը տային չարագործներուն ինչ ազդէ որ լինին և զանոնք փառաւորապէս կախէին վիզերնուն, այն ժամանակ քուրդք և հայք կատարեալ համաձայնութեամբ կապէին և այն երկիրներու մէջ խաղաղութիւնը կը տիրէր: ՆԱՄԱԿ ԹԻՒՐԿԻՍՏԻՑ

Կ. Պոլսի, 14 օգոստոս 1882

Հանրաժանութի չէյն Ուպէտուլլահ երկու տարի Կ. Պոլսի մէջ կառավարութեան հիւրասիրութեան վերջը՝ յանկարծ այս օրերս իմացուցաւ որ խոյս է տուեր և զարձեռն է իր հայատակ քուրդերի մօտ: Եթէ այս միջոցին ամենուն ուղարկութիւնը Եգիպտոսն ամբողջապէս զբաւած չըլլար՝ այս դէպքը մեծ կարեւորութիւն պիտի ստանար և լըրագիրք մասնաւորապէս պիտի զբաղէին այս եղելութեան պարագայներուն և անոր հետեանքներուն վրայ, վասն զի դժուար է հաւատարմ որ չէյին խաղաղասէր զիտարութեամբ մեկնած ըլլայ Կ. Պոլսէն, որ տեղ ամեն հանգստութիւն և մեծարանք կը վայելէր նոյն իսկ սուլթանի և նախարարաց կողմանէ: Իսկ հայերուն համար այս դէպքը մասնաւոր մի նշանակութիւն ունի, վասն զի այն եղելութիւններն որք թիւրքա-պարսկական սահմանագրութեան անպատճառ պիտի կատարին՝ մեզ համար կարեւոր հետեանքներ կրնան ունենալ: Բուրդերուն կրկին բանակ հանելն միշտ աղետալից մի բան է այն կողմի զրկումնէն համար, վասն զի նոքա են միշտ մուրձի և սալի մէջ մը նացողն, բայց այժման քաղաքական վիճակն յոյս կուտայ միանգամայն որ սահմանակից տէրութիւնք որ և է միջոցով պիտի աշխատին վերջ գնել այս անգամ քրդաբնակ Հայաստանի անհանդուրժելի վիճակին: Արդէն չէյին Ուպէտուլլահ իր քաղաքործութիւնները չը սկսած Գրան և Թէհրանի մէջ փոխադարձ զգոհութեան ցոյցեր կը նշխարուին: Պարսից զեպարան, Մոսկովն խան, թիւրք կառավարութեան մեղաքննութեանը կամ գոնէ անհոգութեանը կը վերագրէ չէյին փախուստն և բացատրութիւն կը պահանջէ: Եթէ մեղաքննութիւն չիկայ, հակադրութեան թալուրթիւնը, թիւրք օտարականութեան անկարողութիւնը յայտնապէս կերկնին, վասն զի Ուպէտուլլահի աներեղութեանը այստեղ իմացուցաւ երբ նա արդէն առօր փառք ժամանած էր իր ընտանեաց գիրկը: Այս փախուստի պարագայներն տարբեր կերպով կը պատմուին այս տեղ: Ստոյգն այն է որ Բամազան ամսոյն վեցերորդ օրն չէյին իր հրաժեշտը տուած է Պոսփորի ավազաններու առանց իր նոր հասցէն իր դռնապանին թողելու: Շէյին Կ. Պոլսի և կած օրէն ի վեր Պէշլեքթաշի թաղը բաւական ընդարձակ տան մը մէջ կը բնակէր հակադրութեան ներքեւ և զաղտնի ոտտիկաններ չարութեան անպակաս էին այդ տանը բողբոջներն: Այդ պատմուի որ չէյին, իբր կատարեալ յերմանաղ մասնատական, զիտարութիւն յայտնեւ և կանխաւ որ այս տարի ալ, ինչպէս ամեն տարի իր սովորութեանը համեմատ, Բամազանի սուրբ

ամիսը բողբոջին առանձնութեան մէջ պիտի անցնէ և ոչ որ պիտի ընդունի իբրեւ այցելու որպէս զի կարողանայ աղօթքի և ծոմապահութեան նուիրել իր անձը: Բամազանէն առաջ պալատէն կուգային զայն այցելել, ինքն ալ սովա պալատ կը գնար մասնաւոր հրաւերով, բայց նորա զերմանաղ որոշումը չը խանգարելու համար այդ փոխադարձ երթեկեւորութիւնները դադարեւ ինչ Բամազանի սկիզբէն ի վեր, այնպէս որ նոյն ամսոյն վեցին, առաւօտուն կանուխ Ուպէտուլլահ փախչելով ամբողջ 24 օր ունէր հանգիստ ճանրողութեւ համար: Ումանք կըսեն թէ ծպտեալ, իր չէյին հագուստները հանած, պարզ Կ. Պոլսի Եգիպտոսի մը զգեստով անցեր է Պոսփորի անխական եղբրը, խակիւտար, և անկէ ձիով շարունակել է իր ճանքան: Ումանք ևս կըսեն որ Թամիզ Եգիպտոսի կեղծ անունով անցաղիր մը ի ձեռնին՝ Աւստրիական շրջանաւ մտեր է իբր վաճառական և Տրապիզոն ելնելով առանց ճանչցուելու զացեր է իր երկիրը: Նորա փախուստն 24 օր վերջը տուլթանը դիտելով որ Պարսի մի հանդիսին ներկայ չէ այդ սրբալիքն չէյին, ուղեր է անոր բացակայութեան պատճառն իմանալ և այն ատեն զնացեր տեսեր են որ վանդակին դուռը բաց է մնացեր: Յայտնի է սակայն որ մի բողբոջ Կէֆէի էֆէնդի անուն, չէյին քարտուղարն և հաւատարմ խորհրդականն, կարգադրեր է ամեն բան և միջնորդ եղեր է նրա փախուստն զիտարեցնելու համար: Ու՛ր չէյին այսպիսի մի բան ընելու զրգովն, արտաքին թեւադրութիւն կայ թէ ոչ, դժուար է առ այժմ գիտնալ ստոյգ և այս մասին ենթադրութիւններն տարբեր են: Խորագետ աշխարհաւարք կը կարծեն թէ Անգլիա օտար չէ այս դէպքին մէջ, ուրիշներն թիւրքական մի նոր նախագիտութիւն է, կըսեն, չը գիտենք թէ սա ինչ չափ կը սպասէ մի նոր դժուարութիւն իր գլխին յարուցանել: Կան և այնպիսիներ որք այս կամ այն տեղութեան զորմանքը կատարուած ըլլալը կը հաստատեն: Բայց ամենքն ալ կը ժողովան յիշելու թէ այդ փախուստին առաջին փափաքողը, նորա մէջ առաջին չափ ունեցողն, նոյն իսկ Շէյին պէտք է ըլլայ, որու բանտը որքան որ ոսկէզօծ և հրապուրդով շրջապատած ըլլար՝ դարձեալ մի բանտ էր: Նա գործադրեց ինչ որ ամեն կալանաւորուած մարդիկ առաջին օրէն կը մտածեն. ձեռք բերել կրկին իրենց ազատութիւնը: Ինչ որ ալ լինին այս փախուստին մանրամասն պարագայներն, սա հայոցս համար աւելի կարեւոր մի խնդիր է քան Նեղոսի ատիւնը անգամ եղելութիւններն, վասն զի Եգիպտոսի մէջ խաղաղութիւնը չը վերահաստատուած, և անոր հետ միասին, կարող է մի Ասիական խնդիր երևան գալ միջնորդ առաջ պէտք է հինք սպասել որ Անկլիան կատարեալ հաշտուցումն ստանայ Սուլթի մասին և ապա արեւելեան միւս առկան մնացած հարցերով զբաղի: Արդ՝ այս միջոցին եթէ որ և է մի խնդիր յարուցուի թիւրքա-ասիական երկիրներու վերաբերմամբ, հաւանական է որ պիտի օգտուի միմիկ անկէ, և ինչ աւելի յարմարագոյն առիթ է լուծելու համար այս միջոցին կտրուկ մի ձեռք նաեւ Փոքր-Ասիոյ հարցը, երբ թիւրք կառավարութիւնը, ամեն կողմէ կաշկանդեալ, առանց մէկ անկէղծ զաշնակցի, անկարելիութեան մէջ կը գտնուի հաղար և մէկ դժուարութիւններ հանելու երբ Հայաստանի բարենորոգման խնդիրը յուղուի այս պահու: Մեր յուսանահատած եմք արդէն թիւրքի յօժարակամութեամբ ըլլալը բարենորոգումներն: Նիւթական ճնշմամբ, առանց թիւրքի միջամտութեան կարող է պարզեւ մեզ այդ բարեքն, նա որ արեւելեան քրիստոնէից ազատութեան դարաւոր և աւանդական պայծառն ստանձնած է և որու ապագայներն տուած է աւելի ծանր և աւելի տաղիւնապալից պարագայներու մէջ: Այլ շարունակեմ եգիպտական լուրերուն վրայ կատարեալ լուրթին պահել, վասն զի, ինչպէս կը լուրի արդէն, Կ. Պոլսի պէտք չունիք այդ լուրերն ստանալու համար: Սակայն դիւրին է ձեռք հասկանալ որ, իբր թիւրքաբնակ ժողովուրդը որչափ անձկանք կուզենք զիտնալ թէ ինչ կերպով այդ գործն եղբակալութիւն պիտի գտնէ, և թէ այդ հարցն ալ արդեօք նախապատրաստուած մի յատարած գործադրութիւնն է: Ոչ որ կարող է այս խնդրը ճշդիւ լուսաբանել մեզ, ոչ որ բացի թիւրքիս այն աշխարհաւոր խմբագրերն որ երբեմն հիացուց ամենքին կանխաւ գուշակելով Գամպէթթայի նախարարութեան անկողնը: Մ. Կ.

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

— «Daily Telegraph» լրագրին հաղորդում են, որ Ուէլլին և զվաւոր շտաբը երկէ իզմայիլի վերադարձան:

— Կ. Պոլսից հեռագրում են օգոստոսի 18-ին: Սուլթանի պալատում խորհրդակցութիւնները շարունակվում են: Ասում են, որ Բ. Գուլը ընդունեց լորդ Դիւֆրինի առաջարկութիւնը, որ թիւրքաց զօրքերի ափ իջնելը պէտք է կատարվի Արուկիրում: Այսօր Սալոնիկից մի զօրաբաժին ուղարկվեցաւ դէպի սահմանը այնտեղ հանգստութիւն վերականգնելու համար:

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՀԻՍՏՈՒՅԻՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԵՆՑ

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 24 օգոստոսի: «Прав. Вѣст.» լրագիրը հաղորդում է. Շաբաթ օրը Պետրովսկոէ առևտրական ուսումնարանի բացման ժամանակ ստացվեցաւ հետևեալ հեռագիրը Թագաւոր Կայսրից. «Խնդրեմ յայտնել Պետրովսկոէ ուսումնարանի հոգաբարձութեան անդամներին, որոնք ներկայ են շինութեան հիմքի զցելուն իմ շնորհակալութիւնը: Հոգով ցանկանում եմ այդ նոր ուսումնարանին ծաղկել և պատրաստել օգտակար և ազնիւ երիտասարդներ հայրենիքի համար: Այլք սանդը՝ Երկարգործական բաժինը հրաւիրում է ցանկացողներին ներկայ գտնվել Լոնդոնի աշխարհահանգստին ձկնորսութեան արդիւնքների և գործիքների, որ լինելու է 1883 թ. ապրիլի 19-ին: «Нов. Время» լրագիրը հաղորդում է. Թագաւորութեանը ներկայ կը լինեն Մոսկովայի սինդական գործաւորական անդամները, զվաւոր արքեպիսկոպոսներ, ընդամենը 12 երարներ: Լուր է տարածված, որ մաքսային զեղծութիւնների պատճառով շտաբը արձակված են ծառայութեանց: Տուրքենիկի առողջութիւնը լաւացել է: «Голосъ» լրագիրը հաղորդում է որ սենատը հաստատեց դատաւոր Ալեքսանդրիայի հակահրէական անկարգութիւնների գործի մասին: Զիպահահիմարկութեան 1883 թ. հաշիւը հետևեալն է. մուտքեր 208,517 ռ., ծախսեր 951,878 ռ.: «С.-Петербург. Вѣдом.» լրագիրը հաղորդում է. որ գտնաւորների և մասնաւոր անձանց կապալների պայմաններն նոր կանոններ մշակող մասնաժողովի նիստերը կը սկսվեն սեպտեմբերի 15-ին և կը վերջանան յունվարի 1-ին: «Новості» լրագիրը հաղորդում է, որ Տուրքիստանի քննիչին թոյլ է տուած առանձին խորհուրդներ կազմել և հրաւիրել գործի հետ ծանօթ անձանց: Պատերազմական և ծովային միւստրութիւնները 7 բեռնակիր նաւեր վարձեցին Վլադիվոստոկ գնալու համար: Սերբիայի նախկին կամաւորները Չերնիաւի գնալու ժամանակ նրան մի պատկեր կը նուիրեն:

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 25 օգոստոսի: Եւպոնիայից ստացված տեղեկութիւնների համեմատ եւպոնական կառավարութեան և Կորէայի մէջ ծագած դժուարութիւնները վերջացած են:

ԽԱՐԿՈՎ, 25 օգոստոսի: Մեծ իշխան Նիկոլայ Նիկոլայեւիչ Գուբոֆի ուղեկցութեամբ ուղեւորվում է Երկաւորադրեց հեծելազօրքի խաղերին ներկայ գտնվելու համար:

ՆԵՐՁԻՆՍԿ, 25 օգոստոսի: Զարայկայի շրջանի մէջ մէկ ու կէս ամիս երաշտութիւն է: Գետը փոքրացաւ: Շիկէի նաւաւնագուլութիւնը Ամուրի վրա զաղարեցաւ: Նիկոլայ և վսիկի անկարելի է դուրս բերել ծովով բերած ապրանքները: Հացերը վնասված են մանաւանդ Վերին-Ուղինսկի և Զիտինսկի շրջաններում: Արգունի վրա լաւ է: Հանքերից բաւականաչափ ոսկի է սպասվում:

ԲԵՐԼԻՆ, 25 օգոստոսի: Այսօր հասաւ Բրեսլավի կայսր Վիլհելմ Մեծ իշխան Վալդիմիր Ալեքսանդրովիչի ուղեկցութեամբ:

ԼՕՆԴՈՆ, 25 օգոստոսի: Անգլո-թիւրքական դաշնակցութիւնը կայացաւ, թէպէտ պաշտօնապէս դեռ յայտնի չէ:

ԼՎՈՎ, 25 օգոստոսի: Հովուական կոնգրէսով Սեմբերատովի յայտնում է, որ պապը բաւական մնաց նրա բացատրութիւններով եկեղեցու դրութեան և լուսինների մասնակցութեան մասին. նա համոզվեցաւ վերջինների հաւատարմութեան մէջ և բուսմիներն մասին վատ մտադրութիւններ չունի:

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 25 օգոստոսի: «Прав. Вѣст.» լրագիրը հաղորդում է. երէկ երեկոյան 5 ժամին հասաւ չերնօգորեան իշխանը: Ճանապարհին բոլոր կայարանները զարդարված էին ուսուց և չերնօգորեական դրօշակներով, իսկ զիշները լուսաւորված էին: Ամեն տեղ ամբողջ ողջունում էր իշխանին օգևորված «ուրայով», առաջարկում էր աղ ու հաց և ծաղիկներ: Պսկովի մէջ եպիսկոպոսը օրհնեց իշխանին և նրան մի պատկեր ընծայեց: Նըրան դիմաւորելու համար գնացին Ս. Պետերբուրգի նահանգապետ և իշխանի մօտ լինելու համար նշանակված կոմս Օրլով-Վենիսով: Ս. Պետերբուրգի մէջ իշխանին դիմաւորեցին Մեծ իշխաններ Կոնստանտին և Գաբորի Կոնստանտինովիչներ, Միխայիլ Միխայլովիչ, զինուորական և քաղաքական ծառայողները և հասարակութիւնը, որ «ուրա» էր կանչում: Կայարանից իշխանը անյապաղ ուղևորվեցաւ Պետրովսկովի մայր-եկեղեցին հանդուցեալ Թագաւորի գերեզմանին երկրպագելու համար: Իշխանը չափազանց զգացված էր: «Journal de St. Petersburg» շերմ կերպով ողջունում է իշխանին իբրեւ ցեղակից ժողովրդի առաջնորդի, քաջ զինուորի, խնայի կառավարչի, որ սիրված է հպատակներից և յարգված կառավարութիւններից: Կոմս Բարանովի բացակայութեան ժամանակ միւստրների մասնաժողովին կը նախագահէ Գելիանով: «Голосъ» լրագիրը հաղորդում է, որ սրբազան սինդի օբեր-պրօկուրօրի առաջարկութեամբ ոչնչացրած է այն կարգադրութիւնը, որ արգելում էր Վլադիվոյի հոգեւոր սեմինարիայի ուսանողներին բարձր ուսումնարաններ մանել: Հոգեւորականների ժողովները վերջանում են: Թեմական օրիորդական ուսումնարանների տեսչուհիների ընտրութիւնը ուսումնարանական խորհուրդներին է յանձնվում: Սրբազան սինդի հաշիւների նախագիծը հետևեալն է. մուտքեր 50,597 ռ., ծախսեր 10,307,135 (?): «Новое Время» լրագիրը հաղորդում է, որ Խարկովի նահանգապետ նշանակված է Եւրօսլավի արմուականների առաջնորդ Վ. Վր. Կոլաշեւի:

ԿԱՐԼՍՐՈՒԷ, 25 օգոստոսի: Երկաթուղու աղետի ժամանակ Կոլմարի և Ֆրէյբուրգի մէջ սպանված են 100 մարդ և վնասված են 200:

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԵՆՑ

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 25 օգոստոսի: «Прав. Вѣст.» լրագիրը հաղորդում է, որ միւստրների մասնաժողովի նախագահ կոմս Բարանով արձակուրդ է ստացել արտասահման գնալու համար և նրա տեղ նշանակված է Գելիանով: Երէկ հասաւ Ս. Պետերբուրգ չերնօգորեան իշխանը: Ճանապարհին նրան համակրական ցոյցեր էին անում: «Голосъ» լրագիրը հաղորդում է, որ Թեմական ժողովները զրկված են հոգեւոր ուսուց

նարանների տեսչությանը ընտրելու իրա-
ւունքից:

10հոկտեմբեր, 25 օգոստոսի: „Times“ լրա-
գիրը հաւատարմութիւն է, որ իր թէ բռնկած
է մի զբաղումով, որ ապացուցանում է
սուլթանի և Արաբի-փաշայի համաձայնու-
թիւնը:

Կ. ՊՈԼԻՍ, 25 օգոստոսի: „Վաղարշ“ լրա-
գիրը մէջ տպած է պաշտօնական ընտրելու
Արաբի-փաշայի ապստամբ յայտնելու մա-
սին:

Խմբագիր—հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐՇԵՐՈՒՆԻ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Յանձնուեցաւ մամուլին մեր
„ՀԱՅՈՑ ԼԵՁՈՒԻ ՈՒՍՈՒՑԻՉ“ երկրորդ
ՏԱՐԱՐԱՅ ԳՆԱԿԱԳԻՐԸ
եւ լոյս կը տեսնի մինչև ամսին վերջը:
Յ. Նազարեանց

Լոյս տեսան „ՎԱՐՃԱՐԱՆԻ“ ա-
ռաջին և երկրորդ համարները: Ստորա-
գրուել կարելի է Վ. Շահվերդեանի լրա-
գրական գործակալութեան խանութում և
պ. Ծատուրեանի գէպոյում: Տարեկան գինն
է Հինգ րուբլի:

**ԸՆԴՀԱՆՈՒՐ ՈՒՍՈՒՑԱ-
ԿԱՆ ԺՈՂՈՎԻ** անգամակցութեան
ՏՈՄՍԱԿ ցանկացողները կարող են
ստանալ Ուսուցչական Ժողովի ԳՐԱՍԵ-
ՆԵԱԿՈՒՄ, որ գտնվում է ԱՐԾ-
ՐՈՒՆՈՒ ԳԱԼԵՐԵՑՈՒՄ № 170.
ՏՈՄՍԱԿ գինը 2 րուբլ է:

ԹԵՅ առաջին հոգն է այս տարի չա-
փանց գոյնաւոր և հոտաւետ: Այդ Թէյից
ԱՆԳԼԻԱԿԱՆ ԽԱՆՈՒԹԻ մէջ
ստացված է 50,000 ֆունտ և ծախվում է
25% էժան և աւելի լաւ քան թէ ուրիշ
տեղ: Օրինակ, Լաւ ԿՈՒԲՈ Թէյ 1 ր.—1 ր.
20 կոպ., պատուական ՍԱՆՖԱ Թէյ 1 ր.
40 կ., հիանալի ՄՈՒԿ Թէյ 1 ր. 60 կ.
այս Թէյ ամեն տեղ ծախվում է 2 ր.—2 ր.
50 կ., զեղեցիկ ԿԱՅՍԱՌ Թէյ 1 ր. 80 կ.
և ամենալաւ ֆուլ-չուլ-ֆուլ Թէյ 2 ր. մա-
քուր Թէյ առանց թղթի: Նոյն տեղը սովոր-
աբար լինում են 500 երկաթէ ՄԱՀԱԿԱԼ-
ՆԵՐ 6 ր.—60 ր., երկաթէ ԳՐԻՉՆԵՐ ամ-
բողջ Անգլիական համար, շօխաղ ֆրայ,
Շեփերդի ԳԱՆԱԿՆԵՐ, վերականգնող ՄԱԿ-
ՄԱՍՏԵՐ մազերի համար, հրացաններ ԳԱՌԻ,
ԲԵՂՎԱԿՆԵՐ վերքի, ԹԱՄԲԵՐ Բարձրերի,
Կոյմանի նըշընայ, ԱԼԲՈՒՆԵՐ Շփոյի և
զետի: **ԱՆԳԼԻԱԿԱՆ ԽԱՆՈՒԹԻ,
ԹԵՅԻԼԻՍԻ ՄԵՋ ԱՐՇԵՐՈՒՆՈՒ
ԳԱԼԵՐԵՑՈՒՄ** № 156, 157, 158,
159 և 100:

31—100

Въ Редакціи газеты

«МШАКЪ»

Продается

БРОШЮРА

„ЭКОНОМИЧЕСКОЕ ПОЛОЖЕНИЕ
ТУРЕЦКИХЪ АРМЯНЪ.“

Д. Григорія АРՇՐՈՒՆԻ.

Брошюра напечатана въ Москвѣ.

Цѣна 25 коп.

**ԸՆԴՀԱՆՈՒՐ ՈՒՍՈՒՑԱ-
ԿԱՆ ԺՈՂՈՎԻ** նախապատրաստու-
թիւնները հոգացող Կարգադրել Զանա-
տողը ինքնուրու է այն պարաններին, որոնք
որ և է **ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆ** ցանկա-
նում են ստանալ **ՅԱՆՁՆԱԺՈՂՈ-
ՎԻՅ** կամ հաղորդել նորան, որ բարեհա-
ձեւ **ՇՆՈՐՀ ԲԵՐԵԼ** նրա ԳՐԱ-
ՍԵՆԵԱԿԸ ԱՐՇԵՐՈՒՆՈՒ ԳԱ-
ԼԵՐԵԻ ՄԵՋ № 170: Գրասենեակը
բաց է ԱՄԵՆ ՕՐ առաւօտեան 9 ժա-
մից մինչև 11 ժամը:

ԿԼԻԻԶԱՐԵՎԻ և Զագուսնունու
ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆԻ մէջ (Սարգիսյան
փողոց № 38), բացվում է մի **ԲԱԺԻՆ
ՓՈԳՐԵՐԻ** համար և **ՉՈՐՐՈՐԻ**
դաստառն:

3—3

ԵՐԵՒԱՆԱՅ ԲԱՂԱՔԱՅԻՆ:
Ուսումնարանի տեսուչը ներկայ սեպտեմբե-
րից ընդունում է իր մօտ ԳԵՆԵՐՈՒԿ աշա-
կերտներ: Ցանկացողները թող դիմեն Զրի-
վան. Տնօրէնու Կուլիշի, Երեւան-
ԿՈՒՄ.

2—3 (1)

Թողնելով ԹԵՅԻԼԻՍԸ ԱՆԳԼԻ-
ԱԿԱՆ ԽԱՆՈՒԹԻ տեղը ծախում է
իր **ՀՈՂԵՐԸ** նարեթեանց և Միխայ-
լովսկայա փողոցների վրա, գրաֆիկներ 25
կ., ալբոմներ կիսագնով և այլն:

3—15

ԼՈՅՍ ՏԵՍԱԻ ՆՈՐ ԳՐԻԳՈՐ

ՍՐԻՆԳ ՀՈՎՈՒԱԿԱՆ
ԵՐԳԵՐ, ՈՏԱՆԱԻՐՆԵՐ ԵՒ ԱՌԱԿՆԵՐ
ընթերցասէր մանուկների համար

ՏԱՐԸ ԵՒ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆՈՄ

ԳՐԵՑ Գ. ԱՂԱՏԵՆՑ

Վաճառվում է Վ. Շահվերդեանի Լրա-
գրական խանութում: Գինն է 20 կոպ.
օտար տեղերից դիմում են հետեւեալ հա-
ցեով: Թիֆլիս, въ газетное Агентст-
во В. Шавердова.

18—25

ՕԳՈՍՏՈՍ. ԱՍՄԻ ՄԵՎԵՅ

ՍԿՍԵՑ ՀՐԱՏԱՐԱԿՎ ԵՒ ՎԻԵՆԱՅՈՒՄ

L'ORIENTAL

ՖՐԱՆՍԵՐԵՆ ԹԵՐԹԸ, ԱՄԻՍԸ ԵՐԿՈՒ ԱՆԳԱՍ:

„Ժողովուրդ զօրան“ լրագրի հին բաժանորդներին դադարեցրած թերթի տեղ
կուղարկվի այդ նոր հրատարակութիւնը:

„L'Oriental“ թերթի տարեկան գինը 8 րուբլ է, կէս տարվանը 4 րուբլ:

Գրվել կարելի է „ՄՇԱԿԻ“ խմբագրութեան մէջ, կամ ուղղակի Վիեննայում դիմե-
լով հետեւեալ հասցեով: Vienne (Autriche) M. F. Salles I. Neuer Markt 9.

Дозволено цензурою, Тифлисъ, 26 Августа 1882 года.

Վ. ՇԱՀՎԵՐԴԵԱՆԻ ԼՐԱԳՐԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԵԱՆ

ԽԱՆՈՒԹՈՒՄ

Վաճառվում են ի միջի այլոց հետեւեալ մանկավարժական գրքերը:

- Бенекс. *Руководство къ воспитанію*. Переводъ съ послѣдняго нѣмецкаго изданія подѣ редакціею Весселя. Спб. ц. 2 р. 75 к.
Бэнъ. *Психология*. Переводъ съ англійскаго. Спб. ц. 2 р. 90 к.
Вундтъ. *Основанія физиологической психологіи*. Дополнено по новѣйшимъ изданіямъ. 2 ч. М. ц. 7 р.
Джевонсъ. *Основанія логики*. Пер. съ англійскаго языка. Спб. ц. 70 к.
Евстафьевъ. *Начальныя основанія педагогики и дидактики*. Вып. 1-й Спб. ц. 60 к.
Ельницкій. *Курсъ дидактики*. Пособіе для учебныхъ заведеній, въ ко-
торыхъ преподается педагогика. Спб. ц. 90 к.
Ельницкій. *Методика начальнаго обученія отечественному языку*. Спб. ц. 90 к.
— *Педагогика*. Спб. ц. 83 к.
Амосъ Коменскій. *Великая дидактика*. Спб. ц. 3 р. 45 к.
Корфъ. *Наши педагогическіе вопросы*. М. ц. 2 р. 60 к.
Струве. *Элементарная логика*. Варш. ц. 1 р. 15 к.
Спенсеръ. *Воспитаніе умственное, нравственное и физическое*. Спб. ц. 1 р.
— *Основанія психологіи*. Съ приложеніемъ статьи. Сравнитель-
ная психологія млекопитающихъ. Спб. 4 т. ц. 8 р.
Тайлоръ. *Антропология съ 78 рисунками въ текстѣ*. Спб. ц. 3 р. 50 к.
Новиль. *Логика гипотезы*. Спб. ц. 1 р. 75 к.
Ушинскій. *Человѣкъ какъ предметъ воспитанія*. Опытъ педагогической
антропологии 2 т. Спб. ц. 5 р. 20 к.
Фонъ Раумеръ. *Исторія воспитанія и ученія* отъ возрожденія классицизма
до нашего времени въ 2 частяхъ. Спб. ц. 5 р. 60 к.
Шмидтъ. *Исторія педагогики*, изложенная во всемирно-историческомъ
развитіи и въ органической связи съ культурною жизнью
народовъ. Изд. 3-е дополненное и исправленное Ланге: т. I *Исторія педагогики до христіанской эры* ц. 4 р. 60 к.; т. II *Отъ Христа до реформации*, ц. 4 р. т. III *Отъ Лютера до Песталоцци*, ц. 6 р. 35 к. т. IV ч. I *Христіанское гу-
манное воспитаніе* ц. 4 р. т. IV ч. II *Германія и ея школы*
ц. 4 р. Цѣна всѣмъ пяти книгамъ 22 р. 95 к.
Шутце. *Училищевѣденіе*. Практическое ученіе о воспитаніи и обу-
ченіи для семинарій и учителей народныхъ школъ. Глу-
хово ц. 1 р. 75 к.

3—5

Միջի փողոց, Կաթօլիչեական փողոցի անկիւն № 13.

Աւելի էժան, քան թէ ուրիշ տեղ ծախվում են. ՎԻԵՆԱՅԻ ՄԵՎԵԼ ամե-
նայն տեսակ, ֆրանսիական և անգլիական երկաթէ ԿՐԱՎԱՐՆԵՐ 8—30 ր., չա-
փաւորներ 250—25 ր., սակօյցաժներ 1. 30—12 ր., սուս գուլնէր և ձա-
նապարհի 6—35 ր., մարմններ (погребцы) 6—25 ր., սա մօ ժարներ 60
կ.—1.25 ֆունտ, կուլանի պինձէ ամաններ, գերմանացի երկաթէ էմալով
ամաններ. ու մի վալնի կնէր մրա մօ րնի 38 ր.—75 ր., հրացաններ
երկու լուանի 6—32 ր., ու վոլվէրներ ամենայն տեսակ 3. 50—30
ր., պատրոններ. (գուլաններ) ըկօլվէրի, սիգար Ռէկորդի ֆարրիկից. պատրո-
նու և թամբաբու կուլանովի գրդի պապրոզի. 5,000 ՖՈՒՆՏ ԹԵՅ (չայ) ԵՂ.
ՊԱՊՈՂՆԵՐԻ, բիսկիտ. (սուխար չայու և կաֆէի) լինէմի. կօֆէ լինէմի և
Միլեյանի. Պետրոպոլսում 40—1 ր. 25 կ. հայիկներ ամենայն տեսակ
28 կ.—240 ր., պրորկայ գինեգամաններ, համբայի և դարեճրի (для
зельтерскихъ водъ и пива) դուլթուկ (пучок), պալանտներ ամենալաւ և
չայու, դանակ չանգալ զանազան ֆարրիկաներ 1 ր. 20 կ.—25 ր. դուլթիւր.
գրչալիթներ 1 ր. 80 կ.—5—60 կ. դանակ ջրի 1—60 կ.—12 ր., դա-
նակ հացի 20 կ.—1 ր., հատը, կուլանի 1—40 մինչև 3—20 կ. պրբոր.
միս կարելու մաշիկայ. Անգլիական ուլաներ, բրիտանիկ չայիկներ, կաֆէի-
նիկներ ամենայն տեսակ, ջրադաններ կաֆէի համար, ֆրիտեր—Չուր մաքրելու,
կրամալ կարօրէն 18 կ., փաքս ֆրանսիայի ժակշ, թուղթ փռաթի, կանկրտ-
ներ, սուրճուշ, մախա, գրիչ երկաթէ, գրչալթ, քարեախտակ, թանաք,
թանաքամաններ, պրեսպապիներ, գգալներ սեղանի և չայու ֆրաժէ, վարչալի
և բրիտանիկ դուլթիւր 1—50 կ. մինչև 12 ր., և չայու 45 կ.—5 ր., չու-
միլէթ 45 կ.—5 ր., չամաւորներ ամեն տեսակ 25 կ.—12 ր. Չուխու, պու-
սապոլաններ վարչալու, Ռէճիւն ԿԱԼՕՆԵՐ, ամեն տեսակ, գուլաններ կա-
նանց և մարդկերանց 15 կ.—50 կ. Չուխու, չայիկներ, մարդկերանց գալուս-
տիկներ, գոմարիկներ 35 կ.—4—50 կ., հատ, անձրեկ և չորի. սանդղեր ջր-
մայու ոսկորէ, գուսապրչովի և փայտէ, չուսկաներ գլխի, չորի, սապակի, պոլի և
կարտի համար. չուլթի թէլ (бумага) մատիկի կօճի և շալէ (гарусъ) ֆէլ-
չատիլէ մարդկերանց և կանանց, պորտմաններ, քրտաներ, պապիրոսի ամաններ
և մանր գոլանտերիչի ապրանքներ, սապոն ամեն տեսակ 3 կ.—30 կ.,
կտոր, հոտաւէտ ջրեր, պուզրա, Կիցերին ջրի քացաւ, հոտաւէտ պարաշոկներ
ԿԻԼԵՐԻ ԼԱՐՈՐԱՏՈՐԻՑ. և այլն և այլն և այլն:

Վաճառականներին առանձին պայմաններով և զիջումով վերջիշեալ ապ-
րանքներ մեծ քանակութեամբ մշտապէս գտնվում են ՄԻՔԱՅԷԼ ՏԵՐ ՆԻԿՈՂՈ-
ՍԵԱՆՑԻ պահեստում. (въ складѣ) միջի փողոցում կաթոլիկաց փողոցի ան-
կիւնում № 13.

Օտարադադաբացի կարող են դիմել հետեւեալ հասցեով. Թիֆլիսъ Ми-
хаилу Н. Теръ-Никогосову.

123—180

Միջի փողոց, Կաթօլիչեական փողոցի անկիւն № 13.

Типогр. Главн. Упр. Главнонач. гражд. час., Лор.-Мелик. ул., д. каз.